Հավելված 2

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 58-Ա

ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքն (այսուհետ՝ համայնք) իր աշխարհագրական դիրքով, մարդկային և տնտեսական ռեսուրսներով, իրականացրած մի շարք ծրագրերով ձևավորել է ապագայի իր տեսլականը.

Ունենալ մաքուր, բարեկարգ, կանաչապատ, զարգացած և գրավիչ համայնք՝ հնարավորինս հավասարաչափ զարգացած բնակավայրերով: Համայնքը ապրող մարմին է, որին անհրաժեշտ է ամենօրյա խնամք, ուշադրություն, աշխատանք:

Այս համատեքստում համայնքի աղբահանության, սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը միտված է նպաստելու համայնքի տեսլականին:

Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական 2025 թվականի պլանը համայնքի մաքրության և բնության պահպանման, բնակչության հարմարավետության և առողջ ապրելակերպ վարելուն ուղղված փաստաթուղթ է: ԱՍԿՏՊ-ն հանդիսանալու է Մասիս համայնքում աղբահանության ոլորտի զարգացման հիմք հանդիսացող հիմնական փաստաթղթերից մեկը, որով կառաջնորդվենք 2025 թվականի ընթացքում՝ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնելիս:

ԱՍԿՏՊ-ն մշակելիս ուշադրություն է դարձվել համայնքի տարածքում անցակցված հարցումները, աղբահանության և սանմաքրման վերաբերյալ կարիքի գնահատումը, նրա համապատասխանեցմանը օրենքին և մեթոդական ուղեցույցին:

ԱՍԿՏՊ-ի կազմման ընթացքում հիմնվել ենք համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման առկա իրավիճակի, համայնքի աղբահանությանն առնչվող հիմնախնդիրների, աղբահանության ոլորտն ավելի լայն հնարավորություններով զինելու, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա

հնարավորությունների և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ օգտագործելով աղբի թափոնների վերամշակման կամ վերաօգտագործման և այլնի) հնարավորությունների, համագործակցային և արդյունավետ կառավարում իրականացնելու վրա:

Աղյուսակների և գծապատկերների ցանկ

1. Պլանավորման տարածքի բնութագիր
2. Խոշորացված համայնքի ժողովրդագրական տեղեկատվություն
3. Տեղեկատվություն աղբավայրի տարածքի վերաբերյալ
4. Թափոնների տեսակներ և գործածության ձևեր
5. Կանխատեսումների պլանավորման ժամանակաշրջան
6. Պատասխանատվության փաստացի բաշխում
7. Ֆինանսավորում և բյուջե
8. Եկամուտների և ծախսերի նկարագրություն
9. Հավաքագրում և ծախսեր
10. Թափոնների գործածության հասանելի տարբերակներ

Հապավումներ

ԱՍԿՊ – Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլան

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմին

ՈՒԹՀՍ – Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ /SWOT/

ՊԼԱՆ – Աղբահանության կառավարման պլան

ԲԲՇ – Բազմաբնակարան շենքեր

ԿԿԹ – Կոշտ կեցաղային թափոններ

ՆՈՒՀ – Նախադպրոցական ուսումնական հաստատություն

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2025 ԱՍԿՏՊ-ի կառուցվածքը

Պլանի անվանում	Հայաստանի Հանրապետության Արարատի Մարզի Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական 2025 թվականի պլան
Պլանի մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր	Մասիս խոշորացված համայնք՝ Մասիս քաղաք, Արևաբույր,Սիփանիկ,Դարակերտ,Հայանիստ, Նորաբաց, Սայաթ-Նովա, Խաչփար, Հովտաշատ, Մարմարաշեն, Գետափնյա, Նոր Կյուրին, Ղուկասավան, Դարբնիկ, Դաշտավան, Նոր Խարբերդ,Զորակ, Գեղանիստ, Արբաթ, Արգավանդ, Ազատաշեն, Նիզամի, Այնթապ, Ջրահովիտ, Ռանչպար, Նորամարգ և Սիս գյուղեր
Պլանավորման ժամանակաշրջան	2025 թվական
Պլանը կազմող անձանց անունը, ազգանունը, պաշտոնը	✓ Սուրեն Ամիրջանյան, Մասիսի համայնքապետարանի կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ ✓ Սևան Խաչատրյան, « Մասիս կոմունալ տնտեսություն բարեկարգում և կանաչապատում» Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Պլանը կազմող անձանց էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը	+37477767975 masis.komunal@mail.ru

Մասիս համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում՝ մայրաքաղաք Երևանից 14 կմ դեպի հարավ, մարզկենտրոն Արտաշատից՝ 20 կմ դեպի արևմուտք:

ՀՀ վարչատարածքային բարեփոխումների արդյունքում 2021 թվականի վերջին Արարատի մարզի Մասիս համայնքն իր կազմում միավորեց համանուն քաղաքը և շրջակա 26 գյուղերը՝ Արևաբույր,Սիփանիկ,Դարակերտ,Հայանիստ, Նորաբաց, Սայաթ-Նովա, Խաչփար, Հովտաշատ, Մարմարաշեն, Գետափնյա, Նոր Կյուրին, Ղուկասավան, Դարբնիկ, Դաշտավան, Նոր Խարբերդ,Զորակ, Գեղանիստ, Արբաթ, Արգավանդ, Ազատաշեն, Նիզամի, Այնթապ, Ջրահովիտ, Ռանչպար, Նորամարգ և Սիս: Միավորումով պայմանավորված

որոշակիորեն փոփոխվեցին զարգացման ուղղություններն ու համայնքի արտաքին դիրքավորումը:

Պլանը միտված է Մասիս խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման որակի բարելավմանը, կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ձևավորմանն ու խոշորացված համայնքի ներսում միջբնակավայրային համագործակցության խթանմանը: ԱՍԿՏՊ-ն հնարավորություն կստեղծի նաև հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ աղբի տեսակավորման, կենցաղային թափոնների կառավարման, աղբի վերամշակման գործընթացների և ռեսուրսների կառավարման պրակտիկայի մասին :

Ներկայումս Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են «Մասիսի կոմունալ տնտեսություն բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Աղբահանությունը համայնքի՝ Մասիս քաղաքում, Այնթապ և Նոր Խարբերդ բնակավայրերում իրականացվում է շաբաթվա բոլոր օրերին, սանիտարական մաքրման աշխատանքներըյ յուրաքանչյուր աշխատանքային օր, իսկ մնացած բնակավայրերում շաբաթական երկու օր: Ներկայումս սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները համայնքում իրականացվում են Մասիս համայնքի ավագանու որոշմամբ հաստատած պայմաններով և կարգով: Համայնքում սահմանված աղբահանության վճարը մեկ շնչի հաշվով կազմում է Մասիս քաղաքում 250 ՀՀ դրամ, բնակավայրերում 200 ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ համայնքում դեռևս ձևավորված չէ աղբի նախնական տեսակավորումը այդպիսի պահանջ չլինելու պատճառով, այսինքն՝ տեսակավորումը սկզբնաղբյուրում: Հիմնականում այն կատարվում է ոչ ֆորմալ ուղիներով աղբավայրերում: Համայնքի հավաքված աղբը տեղափոխվում է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի աղբավայր:

Ցանկալի է կառուցել Եվրոպական միության չափանիշներին համապատասխան աղբի վերամշակաման գործարան, որը կնպաստի աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրմանը,, ինչն էլ կնպաստի համայնքում առավել արդյունավետ, հստակ պարբերականությամբ և պատշաճ կերպով աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կառավարմանը: Անհրաժեշտ է Խոշորացված համայնքի բոլոր

բնակավայրերում իրականացել աղբահանության որակյալ ծառայություններ՝ ինչով կբարելավվի շրջակա միջավայրի վիճակը,, կխթանվեն համագործակցության ավելի բարենպաստ պայմաններ բնակավայրերի միջև:

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տարեկան 2025 թվականի պլանը կազմվել է մեթոդաբանության ուսումնասիրության, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4.-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 16-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բազմաբնակարան շենքերի մասին» օրենքների և մի շարք ենթաօրենսդրական ակտերի հիման վրա:

Պլանը համապատասխանում է թափոնների ստորակարգությանը 65%-ով՝ նպաստելով թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը: Ստորակարգության նպատակն է ապրանքներից առավելագույն օգուտների ստացումը և դրանցից նվազագույն թափոնների գոյացումը: Թափոնների կառավարման արդյունավետ համակարգերն ընդունակ են թափոնների նվազեցումից բացի զգալի այլ օգուտներ բերել, որոնք կարող են նաև ծառայել որպես հիմնական նպատակներ: Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանում այդպիսի կողմնակի օգուտների շարքում կարելի է նշել.

Հանրային առողջություն. չկառավարվող աղբը հաճախ հայտնվում է փողոցներում կամ հորերում՝ գրավելով կենդանիներին և միջատներին: Փոսերի մեջ կամ ոչ համապատասխան աղբավայրերում թափված աղբը կարող է հանգեցնել թունավոր նյութերով ստորերկրյա ջրերի աղտոտմանը: Աղբի հավաքման և հեռացման գործընթացների բարելավման արդյունքում հնարավոր է ուղղակիորեն ազդել հանրային առողջության, մաքուր ջրի հասանելիության և ավելի մաքուր շրջակա միջավայր ունենալու հիմնախնդիրների վրա:

Օդի որակ. աղբի բացօթյա այրման սովորույթը շարունակաբար կիրառվում է աշխարհի տարբեր տարածաշրջաններում՝ որը հանդիսանում է սև ածխափոշու առաջացման խոշոր աղբյուր: Թափոնների հավաքագրման երթուղիների վատ կազմակերպման, ինչպես նաև հնացած տրանսպորտային միջոցների կիրառման արդյունքում մեծանում է տրանսպորտային միջոցների կողմից կատարվող արտանետումների ծավալը, ինչը բացասաբար է անդրադառնում օդի որակի վրա:

Աղքատության կրճատում. բազմաթիվ տարածաշրջաններում թափոնները բնակչության եկամուտների կարևոր բաղադրիչ են և տնտեսության տարբեր ճյուղերի համար ծառայում են որպես հումք: Տեղական իշխանությունների գործողությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ տնտեսական, ինչպես նաև աղբի վերամշակմամբ զբաղվող ճյուղերում կյանքի որակի և պայմանների վրա:

Սոցիալական արդարություն. կոշտ թափոնների վերամշակման գործընթացը շատ տեսանելի է ազդում մարդկանց կողմից իշխանությունների և հասարակության ընկալման վրա:

Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական

Մասիս համայնքի ԱՍԿՏՊ-ի կազմման հիմնախնդիրներն են հանդիսացել՝

- համայնքի տարածքում աղբահանության պատշաճ համակարգի բացակայությունը,
- աղբահանության ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մշտադիտարկման համակարգի թույլ մեխանիզմների կիրառումը,
- շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածությունը, քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան աղբավայրերի բացակայությունը,
- համայնքային միջոցների սղությունը և մասնավոր հատվածի կողմից ոլորտում ներդրումներ կատարելու հետաքրքրվածության բացակայությունը,
- սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը՝ դրանց օգտահանման, վերաօգտագործման, վերամշակման և վերականգնման համար խթանիչ մեխանիզմների բացակայությունը,
- հանրության իրազեկվածության ցածր մակարդակը,

որի արդյունքում ձևավորվել է ԱՍԿՏՊ-ի նպատակն ու ենթանպատակները:

Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տարեկան 2025թ. ընդունման նպատակն է՝ Մասիս խոշորացված համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքման, ինչպես նաև աղբի քանակի նվազեցման, տեղափոխման և անվտանգ հեռացման, օգտահանման ու վերամշակման կայուն մեխանիզմների ներդրումը՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ

Ենթանպատակ 1

Համայնքի հնարավորությունների սահմանում իրականացնել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր :

Ենթանպատակ 2

Ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ՝ խթանելով առավել արդյունավետ միջհամայնքային համագործակությունն ու բնակիչների ակտիվ մասնակցությունը:

Ենթանպատակ 3

Հանրային իրազեկվածության բարձրացում և կարողութոյունների զարգացում՝ թափոնների ճիշտ կառավարման և բնակչության մշտական և հետևողական մասնակցությունը աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման գործընթացներում ապահվելու նպատակով:

Ենթանպատակ 4

Համայնքի աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու նպատակով:

Ենթանպատակ 5

Աղբահանության նոր սխեմաների ներդնում համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով:

Համակարգելով համայնքի աղբահանությանն և սանիտարական մաքրմանն ուղղված հիմնախնդիրներն ու նպատակները, ձևակերպվել է համայնքի տեսլականը աղբահանության վերաբերյալ.

Ունենալ զարգացած, մաքուր և բարեկեցիկ՝ հարմարավետ համայնք, իրականացնելով տեխնիկապես հագեցվածությամբ և նորարական լուծումներով աղբահանություն և սանիտարական մաքրում, ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ,

մեծացնել բնակիչների մասնակցությունը՝ աղբահանության ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով:

Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական 2025թ. պլանի դրույթների կիրառումը կնպաստի համայնքի աղբահանության կայուն համակարգի ներդրմանը. որի արդյունքում կունենանք՝ համապատասխան հագեցվածությամբ սանիտարահիգիենիկ, բնապահպանական և քաղաքաշինական նորմերին համապատասխան աղբահանության ու սանիտարական մաքրման ծառայություններ, միևնույն ժամանակ, որպես երկրորդային ռեսուրս կնպաստի թափոնների առավելագույնս օգտագործմանը:

Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ վերլուծություն

Ստորև ներկայացված է Մասիս համայնքի ՈւԹՀՍ վերլուծությունը՝ ընդհանրացնելով խոշորացված համայնքում աղբահանության և սանիտարական մաքրմանը վերաբերող հիմնահարցերը, ուրվագծելով թույլ կողմերն ու սպառնալիքները՝ դրանք վերացնելու նպատակով, և կենտրոնանալով համայնքում աղբահանության ուժեղ կողմերի ու հնարավորություններ և դրանց զարգացումը խթանող այլ ռեսուրսների վրա:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Համայնքի աշխարհագրական բարենպաստ դիրքը: Համայնքի մաքրության աշխատանքներով զբաղվող կազմակերպության կոմպետենտությունը: Բնակավայրերի փոխկապակցվածություն, համայնքի կոմպակտություն Բնակչության իրազեկվածությունը:	Տեխնիկապես չհագեցված լինելը՝ առկա մեքենաների քանակը և մաշվածությունը թույլ չի տալիս առավել որակյալ կազմակերպել աղբահանությունը: Համայնքի նեղ, միակողմանի փողոցները: Աղբի ամբողջական տեսակավորման բացակայությունը: Ոլորտում մրցակցության բացակայությու Աղբը նախատեսված վայրերում թափելու մշակույթի բացակայությունը բնակչության շրջանում:
Հնարավորություններ	Սպառնալիքներ
Նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղբի, աղբահանության և սանիտարական մաքրման մասին կրթական ծրագրերի ներդնում՝ համայնքում մշակույթի ճիշտ ձևավորման և ճիշտ դաստիարակության նպատակով:	Աղբի խառը կուտակումը, որը թափվում է մեկ ընդհանուր աղբավայրում, ինչն էլ առաջացնում է լուրջ բնապահպանական խնդիրներ:

Պլանավորված տարածքի բյութագիր

Պլանավորված տարածքի նկարագրություն

Մասիս համայնքի խոշորացումից անցել է շուրջ 4 տարի: Աղբահանությունն ու սանիտարական մաքրումը՝ հանդիսանալով զարգացմանը նպաստող գերակա ոլորտ, 2025թ.-ին նպատակ ունի հասնելու առավելագույն աստիճանի՝ որակական և ծառայությունների մատուցման մակարդակով: Պլանի իրականացման ընթացքում համայնքի աղբը կշարունակվի տեղափոխվել Էջմիածնի աղբավայր:

Պլանը իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել առանձնացնել և ներկայացնել աղբահանության տարածքի ընդհանուր բնութագիրը: Ըստ պլանի՝ աղբահանության պլանավորվող տարածքը ընդգրկում է բոլոր բնակավայրերի սանմաքրվող աղբը, Աղյուսակ 1-ում ներկայացված է խոշորացված համայնքի ժողովրդագրական տեղեկատվությունը՝

Աղյուսակ 1

Հաշվառված բնակչության թիվը 01,07,2024թ	Փաստացի բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվ	Բազմաբնակարան շենքերի թիվ	Բնակարանների թիվ
101828	103400	25123	91	3640

Աղբի տեսակավորման սխեմաներ, աղբանոցներ և աղբավայրեր

Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը:

Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական 2025թ. պլանի նպատակին հասնելու, իրազեկման միջոցառումներ մշակելու և ծրագրերը իրականացնելու համար առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը՝ ընդունված թափոնների քանակի ցուցանիշներին համապատասխան:

Ներկայումս համայնքում չի իրականացվում աղբի տեսակավորում, այդ պատճառով հնարավոր չէ առանձնացված աղբի տեսակները արտահայտել տոկոսով:

Պլանը նախատեսում է առաջիկա գործընթացներում առավել մանրամասն ուսումնասիրություն և տվյալների կառավարման կարողությունների ընդլայնում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում:

Տեղեկատվության ամփոփ արդյունքների ցուցանիշները ներկայացված են տոկոսներով աղյուսակ 2-ում: Ներկայացված համայնքային տեղեկատվության ճշգրտությունը կախված եղանակային պայմաններից և ժամանակահատվածից հնարավոր է հստակ չհամապատասխանի ներկայացված տվյալներին:

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր							*Աղյուսակ 2*
			I	**II**	**III**	**IV**	**V**	**VI**	**VII**	**Նշումներ**
			Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	
Կոշտ կենցաղային թափոն	135	13800	100	0	0	0	0	0	0	Քանի որ համայնքում աղբը չի տեսակավորվում՝ տեսակավորված աղբի կշիռը հնարավոր չէ նշել:
Խոշոր եզրաչափերի թափոն				0						
Շինարարական աղբ				40						
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն				25						
Անվադողեր				100						
Փաթեթավորում և փաթեթվածք				25						

Էլեկտրական և էլեկտրոնային թափոն				100						
Կենսաբանական թափոն				10						
Վտանգավոր թափոն				0						

Կանխատեսումների պլանավորման ժամանակաշրջան

Հիմք ընդունելով խոշորացված համայնքի իրավիճակի վերլուծությունը, բացահայտված հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու տեսլականը, կարող ենք ենթադրել, որ 2025թ.-ի ընթացքում բազմաբնակավայր համայնքի տարբեր տարածքներում հնարավոր են տնտեսական և սոցիալական ոլորտային փոփոխություններ: Փոփոխությունները հիմք կհանդիսանան թափոնների որակական և քանակական աղբի գոյացման:

Առավել մանրամասն ինֆորմացիան ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Կանխատեսելի փոփոխություններ	2024	2025	2026	2027	Նշումներ
Փաստացի բնակչության ակնկալվող թիվ	101828	104000	106000	109000	
Տնտեսական ակնկալվող փոփոխություններ	կաճի 10 %-ով	կաճի 20 %-ով	կմնա նույնը	կաճի 20 %-ով	
Սպառողական ապրանքների տեսակների և պահանջարկի ակնկալվող փոփոխություններ	կմնա նույնը	կմնա նույնը	կմնա նույնը	Կմնա նույնը	
Թափոնների գոյացման աղբյուրների ակնկալվող փոփոխություններ	Աճել է	կաճի	կաճի	կաճի	
Թափոնների վերամշակման/օգտահանման ակնկալվող կայանքներ	կմնա նույնը	կմնա նույնը	կմնա նույնը	Կմնա նույնը	
Թափոնների հեռացման վայրերի փոփոխություններ՝ սանիտարական աղբավայրեր, փոխաբեռնման կայաններ	կմնա նույնը	կմնա նույնը	կավելանա	Կմնա նույնը	
Քաղաքականության փոփոխություններից ակնկալվող ազդեցություններ /կանխարգելման, կրճատման, տեսակավորման և վերաօգտագործման մասով/	կմնա նույնը	կմնա նույնը	կմնա նույնը	կմնա նույնը	

Պատասխանատվության փաստացի բաշխում

Պլանում ներկայացված ծրագրերը սահմանված ժամանակին և արդյունավետ իրականացնելու նպատակով կատարվել է այս կամ այն կերպ ներգրավված անձանց՝ շահակիրների, պատասխանատուների, իրականացնողների միջև դերաբաշխում: Պլանով նախատեսված տարբեր գործողություններ և թափոնների գործածության փուլեր ենթադրում են տարբեր պատասխանատուներ և շահակիրներ: Հաշվի առնելով, որ աղբահանության և սանիտարական մաքրման ռազմավարությունը պլանավորված է իրականացնելու համայնքը առաջատար դարձնելու նպատակով այս ոլորտում, ուստի ներգրավված կազմակերպությունների պատասխանատվության վերաբերյալ հստակ դերաբաշխումն ըստ գործառույթների տոկոսներով ներկայացված է ստորև աղյուսակ 4-ում՝

Աղյուսակ 4

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ	80	80	0	90	0				100
Մանսավոր հատված		10	0	10	0	100	100		
Արտադրող		10		0	0			100	
Բնակչություն					0				
Քաղաքացիական կազմակերպություն	20				0				

Հանրային իրազեկվածության աստիճան և մասնակցություն

Բնակչության շրջանում աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ իրազեկվածության աստիճանը, գոհունակությունը որոշելու համար իրականացվել է անանուն հարցումներ: Հարցման նպատակն էր նաև ուսումնասիրել բնակչության ընկալումները, վերաբերմունքը և նախապատվությունները աղբահանության, աղբի տեսակավորման վերաբերյալ:

Աղբահանության իրավիճակի վերլուծությունից ենթադրվում է, որ հարցման մասնակիցների 80%-ը բավարարված է աղբահանության որակից և հանդես են եկել առաջարկություններով աղբահանության վերաբերյալ, որոնք ներառվել են աղբահանության պլանը կազմելիս:



Նկար 1. Աղբահանության որակը համայնքում



Նկար 2. Գոհունակությունը և վճարելու պատրաստակամությունը

Բնակչության մի որոշակի հատված հարցման ընթացքում նշել է, որ աղբամանների տեղակայությունը անհարմարություն է առաջացնում, ինչն էլ բերում է բավարարվածության վերաբերյալ դժգոհությունների առաջացման: Այս պատասխանը հիմնականում նշել են գյուղական բնակավայրերի բնակիչները, որտեղ աղբամանները տեղադրված են կենտրոնական փողոցների վրա՝ հեռավորությամբ բնակելի տներից:



Նկար 3. Աղբահանության հաճախականությունը

Աղբի տեսակավորման և վերամշակման վերաբերյալ բնակչությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել՝ դրական կարծիք արտահայտելով աղբի թափոնների տեսակավորման առաջարկի և ապագա վերամշակմանը նպաստող ծրագրերի իրականացման վերաբերյալ:



Նկար 4.Աղբի տեսակավորման պատրաստակամությունը

Հարցված բնակչության մեծամասնությունը գտնում է, որ իրազեկման միջոցառումները աղբահանության և սանմաքրման ոլորտում կնպաստեն ոլորտային խնդիրների վերացմանը:



Նկար 5. Իրազեկման միջոցառումները կնպաստեն ոլորտային խնդիրների վերացմանը

Արդյունքում աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման կայուն համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ՝

1) Հատկապես համայնքի ՆՈՒՀ-երում և այլ կրթական հաստատություններում դասընթացների, կլոր սեղանների կազմակերպում՝ քննարկվող խնդիրների կարևորության շեշտադրման նպատակով.
2) Բնակչությանը՝ անկախ սեռից, տարիքից և ազգությունից, անհրաժեշտ է իրազեկել թափոնների հետ վարվելակերպի նոր եղանակներին՝ ներկայացնելով, որ թափոնները կարող են նաև հանդիսանալ արժեքավոր ռեսուրսներ.
3) Ներդնել աղբահանության գրագետ մշակույթ տարբեր պետական հաստատություններում և ուսումնական կենտրոններում՝ հիմնվելով օրենսդրական դաշտի կարգավորումների վրա, դրանով իսկ նպաստելով ոլորտի կայուն և համակարգված աշխատանքի ձևավորմանը:

Ֆինանսավորում և բյուջե

Սույն ենթաբաժնում ներկայացված է Մասիս համայնքի աղբահանության ֆինանսատնտեսական բնութագիրը:

Ուսումնասիրելով հավաքագրման տվյալները՝ վերջին երեք տարվա ընթացքում ձեռնարկված մի շարք միջոցառումների արդյունքում աղբահանության վարձավճարների հավաքագրումը էականորեն տարբերվում է նախորդ տարիների համեմատ:

Աղյուսակ 5-ում ներկայացված է հավաքագրված վարձավճարների, աղբահանության եկամուտների և ծախսերի 2022-2024թ.թ.-ի ընդհանուր տեղեկատվությունը:

Աղյուսակ 5

Հ/Հ	Տարեկան	Աղբահանության եկամուտ/հավաքագրում /դրամ/			Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից	Աղբահանության ծախս		Սանիտարական մաքրման ծախս	
		Պլան	**Փաստ**	%		**Պլան**	**Փաստ**	**Պլան**	**Փաստ**
1	2022	160255000	147958678	92.33	0	208897,6	208774,5	70933,1	70900,1
2	2023	165010000	162787477	98,65	0	242184,4	241635,7	117797,6	117797,6
3	2024	168050000	191870759	114,17	0	270890,3	270034,2	128710,1	128710,1

Տնտեսվարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց աղբահանության վարձավճարների հավաքագրման, տեղափոխման ծախսերի հավաքագրման մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Տարի	Փաստացի բնակչության թիվ	Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ	Ֆիզիկական անձանց հետ գործող աղբահանության պայմանագրերի թիվ	Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը /աղբահանության պայմանագիր	Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի	Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ, տարի	Աղբավայրում աղբի տեղադրման ծախս, դրամ/տոննա
2022	89553	200		1090	18685700	208774,0	2400,0/10296
2023	23543/72196	200/150		1144	21960300	241635,7	3600,0/12017
2024	25501/76362	250/200		1230	16537200	270034,2	3600,0/12737

Հաշվի առնելով այն, որ բազմաբնակավայր համայնքում աղբի տեսակավորում ներկայումս ընդհանուր առմամբ չի կատարվում, թափոնների գործածության հասանելի տարբերակները ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Թափոնի տեսակ	Խառը հավաքում (դր/տ)	Տեսակավորված հավաքում (դր/տ)	Երկրորդական (դր/տ)	Տեսակավորման մնացորդներ (դր/տ)	Վերամշակման ենթակա ռեսուրս (դր/տ)	Վերամշակման/օգտագործման մնացորդներ (դր/տ)	Վնասազերծման (դր/տ)	Տեղադրում աղբակույտում (դր/տ)
Կոշտ կենցաղային թափոն	13800	-	-					
Խոշոր եզրաչափերի թափոն	-	-	-	-	-	-	-	-
Շինարարական աղբ	-	-	-	-	-	-	-	-
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն	-	-	-	-	-	-	-	-
Անվադողեր	-	-	-	-	-	-	-	-
Փաթեթավորում և փաթեթվածք	-	-	-	-	-	-	-	-
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն	-	-	-	-	-	-	-	-
Կենսաբանական թափոն	-	-	-	-	-	-	-	-
Վտանգավոր թափոններ								

Նպատակների և թիրախների սահմանում

<table>
<tr><td colspan="5">ՆՊԱՏԱԿ. Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական 2025թ. ռազմավարության ընդունման նպատակն է՝ Մասիս խոշորացված համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքման, ինչպես նաև աղբի քանակի նվազեցման, տեղափոխման և անվտանգ հեռացման, օգտահանման ու վերամշակման կայուն մեխանիզմների ներդրումը՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ:</td></tr>
<tr><td>Ենթանպատակ 1
Համայնքի հնարավորությունների սահմանում իրականացնել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր:</td><td>Ենթանպատակ 2
Հանրային իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում թափոնների ճիշտ կառավարման նպատակով:</td><td>Ենթանպատակ 3
Աղբահանության սխեմաների ներդնում աղբի հավաքման գործընթացը կանոնակարգված իրականցնելու նպատակով:</td><td>Ենթանպատակ 4
Սանիտարական մաքրման մասնագիտացված նոր մեքենամեխանիզմների ձեռքբերում և շահագործում՝ սանիտարական մաքրումը առավելագույն աստիճանի հասցնելու նպատակով:</td><td>Ենթանպատակ 5
Համայնքում աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու նպատակով:</td></tr>
<tr><td colspan="5">ՏԵՍԼԱԿԱՆ. Ունենալ զարգացած, մաքուր և բարեկեցիկ՝ հարմարավետ համայնք, իրականացնելով տեխնիկապես հագեցվածությամբ և նորարական լուծումներով աղբահանություն և սանիտարական մաքրում, ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ՝ խթանելով առավել արդյունավետ միջհամայնքային համագործակությունն ու բնակիչների ակտիվ մասնակցությունը աղբահանության ոլորտի զարգացման նպատակով:</td></tr>
</table>